Երևանի քաղաքապետ
Տիգրան Ավինյանին

Հարգելի պարոն Ավինյան,

Մեր կազմակերպությունը դեռևս 2025թ. փետրվարից մինչ օրս դիմումներ է ստանում Երևան քաղաքում հանրային տրանսպորտից օգտվող քաղաքացիներից, որոնք իրենց դժգոհությունն են արտահայտում Երևանի հանրային տրանսպորտի միասնական տոմսային համակարգի «180 րոպե» և «10 ուղևորություն» ուղետոմսերի փաթեթների գործողության պայմանների վերաբերյալ:

Մասնավորապես, Երևանում հանրային տրանսպորտից օգտվող ուղևորների համար անհասկանալի է, թե ինչո՞ւ են հստակ սահմանված քանակով ուղևորությունների համար իրենց կատարած վճարները որոշակի ժամանակ անց «արժեզրկվում» և որոշակի թվով ուղևորությունների համար փաստացի վճարած լինելով հանդերձ ինչո՞ւ են իրենք տուգանվում ուղետոմսը չվճարելու պատճառաբանությամբ:

Թերևս մեզ համար զարմանալի չէ քաղաքացիների կողմից բարձրացվող այս հարցադրումները, քանի որ դրանց առաջացումը մենք կանխատեսել էինք դեռևս նախորդ տարի և այդ մասին Երևանի քաղաքային իշխանությանը տեղեկացրել ենք 20.02.2025թ. Ե-2896 գրությամբ[1]:

Վերադառնալով խնդրի էությանը նշենք, որ «180 րոպե» և «10 ուղևորություն» փաթեթներով հստակ սահմանված արժեքի դիմաց տրամադրվում են կոնկրետ քանակությամբ ուղևորություններ: «10 ուղևորություն» փաթեթով ուղետոմսի արժեքը սահմանվել է 1500 դրամ, որի դիմաց ուղևորը իրավունք է ստանում երթևեկել 10 անգամ, իսկ «180 րոպե» փաթեթով ուղետոմսի արժեքը սահմանվել է 300 դրամ, որի դիմաց ուղևորը իրավունք է ստանում երթևեկել 3 անգամ:

Սա նշանակում է, որ ծառայություն մատուցողը նախապես իր 10-անգամյա ծառայությունը գնահատել է 1500 դրամ, իսկ 3-անգամյա ծառայությունը՝ 300 դրամ, և ընդունել է, որ դրա արժեքի միանվագ վճարումը լիակատար բավարար է իր կողմից այդ ծառայությունը պատշաճ որակով մատուցելու համար:

Սակայն մեզ համար անհասկանալի է այն տրամաբանությունը, որով հստակ որոշված քանակով ուղևորություններ տրամադրող ուղեվարձի տոմսային փաթեթները միաժամանակ սահմանափակվել են այդ ուղևորությունների սպառման որոշակի ժամկետով:

---

[1] 20.02.2025թ. Ե-2896 գրությամբ Երևանի քաղաքապետին ներկայացրել էինք նաև Երևան քաղաքի հանրային տրանսպորտի ոլորտում առկա մի շարք խնդիրների և միասնական տոմսային համակարգի խնդրահարույց փաթեթների վերաբերյալ մեր վերլուծություններն ու առաջարկները, որոնք սակայն քաղաքապետարանի կողմից պատշաճ ուշադրության չեն արժանացել:

Մասնավորապես, «10 ուղևորություն» տրամադրող ուղետոմսը սահմանափակված է գործողություն 45-օրյա ժամկետով, իսկ 3 ուղևորություն տրամադրող փաթեթը սահմանափակված է գործողության 180 րոպե ժամկետով[2]:

Ելնելով այն իրողությունից, որ այս փաթեթները մի կողմից սահմանում են հստակ որոշված ուղևորությունների քանակ, իսկ մյուս կողմից անձին պարտադրում են այդ ուղևորություններն իրականացնել սահմանափակ ժամկետում, ուստի ուղևորներն այս հանգամանքը ողջամտորեն ընդունում են, որպես **ծառայություն չստանալու դիմաց վճարելու պարտադրանք** բոլոր այն դեպքում, երբ անձը որոշակի հանգամանքներով պայմանավորված՝ 45 օրում չի հասցրել (կարիք չի ունեցել) սպառել իր գնած 10 ուղևորությունները, կամ 180 րոպեների ընթացքում հնարավորություն չի ունեցել իրականացնել 3 ուղևորություն՝ հաշվի առնելով նաև Երևան քաղաքում առկա խցանումների գործոնը:

Նկարագրված իրավիճակի պայմաններում անձը կորցնում է այնքան գումար, որքան համարժեք է իր չօգտագործած ուղևորությունների քանակին: Նույն իրավիճակն է առաջանում նաև 3 ուղևորություն տրամադրող ուղետոմսի դեպքում, քանի որ դրանում սահմանափակված է նաև նույն տրանսպորտային միջոցում 3 անգամ նույն պահին վճարելու հնարավորությունը:

Նշված փաստերի առնչությամբ մեր Կազմակերպության և հանրային տրանսպորտից օգտվող քաղաքացիների համար անհասկանալի է, թե այդ ի՞նչ վնաս է կրելու (կամ իր ո՞ր շահն է վտանգի ենթարկելու) ուղևորափոխադրումներն ապահովող օպերատորը, եթե 3 կամ 10 ուղևորության արժեքը (1 տոմս գնելու եղանակով) վճարած անձն այդ 3 կամ 10 ուղևորությունները սպառի նույն տրանսպորտային միջոցում՝ միանգամից, կամ դրա համար սահմանված ժամկետի ավարտից հետո՝ եթե ուղևորափոխադրման ծառայություն իրականացնողն ի սկզբանե համաձայն է այդ փաթեթով տոմսի արժեքի (300 կամ 1500 դրամի) դիմաց տրամադրել համապատասխանաբար՝ 3 կամ 10 ուղևորափոխադրում:

Եվ քանի որ միասնական տոմսային համակարգը չի նախատեսում ուղետոմսերի ձեռքբերման հետագա գործարքներում գնված ուղետոմսի չօգտագործված ուղևորությունների վճարը վերադարձնելու կամ հաշվանցի հնարավորություն, ուստի ստացվում է, որ այդ ուղետոմսը գնելով և մասամբ չօգտագործելով Երևանի քաղաքապետրանի կողմից անձին պարտադրվում է (չօգտագործված ուղևորությունների մասով) վճարել ոչնչի դիմաց:

Այս երևույթն ուղևորների համար ընկալվում է որպես **քաղաքապետարանի (օպերատորի) կողմից իրենց դրամական միջոցների հափշտակություն**, քանի որ քաղաքային իշխանությունը միասնական տոմսային համակարգով ուղեվարձի վճարման գործընթացը միտումնավոր կազմակերպել է այնպիսի մեթոդաբանությամբ, որ ուղևորից որոշակի թվով ուղևորությունների դիմաց ստանա միանվագ վճարում, սակայն ծառայությունից օգտվելու

---

[2] Մենք տեղյակ ենք, որ 3 ուղևորություն տրամադրող ուղետոմսի փաթեթը հենց իր գործողության ժամկետով է անվանված և ի սկզբանե դրա կիրառության նպատակը եղել է նախապես որոշված ժամաքանակի սահմաններում որոշակի թվով ուղևորությունների տրամադրումը: Սական այս դեպքում ևս տրամաբանական և վաճառքի տեսնակյունից գրավիչ կլիներ, եթե որոշակի ժամանակահատվածում ծառայություններ տրամադրող այլ փաթեթների նման, «180 րոպե» փաթեթով ևս տրամադրվեր անսահմանափակ թվով ուղևորություններ: Մինչդեռ ներկայումս այս փաթեթը սահմանափակված է և ուղևորությունների քանակով և դրանց օգտագործման ժամկետով և որևէ դեպքում չի կարող պիտանի/օգտակար լինել ուղևորների համար, հատկապես Երևան քաղաքում բոլոր մշտապես առկա խցանումների պայմաններում:

սահմանափակ ժամկետի պատճառով «օրինական» հիմք ունենա հրաժարվելու այդ ծառայությունը տրամադրելուց, ստիպի քաղաքացուն կրկնակի վճարել այն ծառայության դիմաց, որի համար քաղաքացին մեկ անգամ արդեն վճարել է և, որ ամենավատն է՝ տուգանի քաղաքացուն որպես ուղեվարձը չվճարած, կարգազանց ուղևորի:

Այսպիսով, իրողությունն այն է, որ **միասնական տոմսային համակարգի մշակման «անհաջող» մեթոդաբանության արդյունքում Երևանի քաղաքապետարանը հափշտակում է ուղևորների դրամական միջոցները, ինչը ուղևորների հոգեբանական վերաբերմունքի մակարդակում ինքնաբերաբար դրդում է դրսևորել պաշտպանության և հակազդման վարքագիծ** (ուղեվարձը կրկնակի չվճարելու եղանակով):

Մենք բնավ չենք արդարացնում այն քաղաքացիների վարքագիծը, ովքեր օգտվել են հանրային տրանսպորտի ծառայությունից և առանց պատճառի չեն վճարել ուղեվարձը, սակայն վստահաբար կարող ենք պնդել, որ ուղևորի կողմից **նախապես կատարված վճարի դիմաց ակնկալվող ուղևորափոխադրման ծառայությունը չտրամադրելը նույնքան անընդունելի է և լայն հասարակության շրջանում առաջացնում է անվստահության մթնոլորտ:**

Այս հարցի վերաբերյալ մեր կատարած ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ինչպես նախկինում՝ ուղեվարձն առձեռն վարորդին հանձնելու տարիներին, այնպես էլ մետաղադրամ ընդունող սարքերի միջոցով վճարում կատարելու ժամանակահատվածում ուղևորների շրջանում առկա չի եղել ուղեվարձը չվճարելու տրամադրվածություն և որպես կանոն բոլոր ուղևորները կատարել են ուղեվարձի վճարման իրենց պարտականությունը:

Սակայն, Երևանի քաղաքապետարանի կողմից ուղեվարձի միասնական տոմսային համակարգում մի քանի անհաջող (անհամադրելի պայմաններով) փաթեթների գործարկումը փոխել են ուղեվարձի գանձման տրամաբանությունը և ուղևորների շրջանում առաջացրել խափվածության ու անարդարություն զգացողություն: Ուստի դա էր պատճառը, որ այս երևույթի դեմ հանրությունը սկսեց պայքարել զանգվածաբար ուղեվարձը չվճարելու եղանակով:

Վերջինիս կանխարգելման համար Երևանի քաղաքապետարանը ս.թ. ապրիլի 6-ից նոր անընդունելի պարտավորություններ է դրել վարորդների վրա, ավելացրել է նրանց աշխատանքի ծավալը, և փոփոխության է ենթարկել ուղևորափոխադրման ծառայության տրամադրման կարգը: Մասնավորապես, վարորդները հրահանգավորվել են ավտոբուսի երկրորդ (միջնամասի) դռները չբացել այնքան ժամանակ, քանի դեռ ներս մտնող բոլոր ուղևորները չեն բարձրացել առջևի դռնով:

Հանրային տրանսպորտի սպասարկման այս մեթոդաբանությունը ոչ միայն նոր անհարմարություններ է առաջացրել ուղեվարձը բարեխղճորեն վճարած և իջնել պատրաստվող ուղևորների համար, այլ նաև այն ուղևորների համար, որվքեր չեն կարողանում տեղավորվել ավտոբուսների գերբեռնված սրահներում հենց միայն այն պատճառով, որ կանգառներում ինջնել պատրաստվող ուղևորների համար երկար ժամանակ դեռները չեն բացվում և չեն ապահովվում ավտոբուսի սրահն ազատելու տրամաբանական հնարավորություն:

Մեր կարծիքով քաղաքային իշխանությունը քաղաքացիների կողմից ուղեվարձի չվճարման դեմ պայքարում տեսանելի հաջողություններ չի կարող գրանցել այնքան ժամանակ, քանի դեռ չի վերանայել միասնական տոմսային համակարգում ներդրված տոմսային փաթեթների ձևավորման պայմանները և իր սեփական քայլերով չի ապացուցել հանրությանը՝ վերջիններիս պատկանող դրամական միջոցները հափշտակելու նպատակի բացակայության մասին։

Այսպիսով, հիմք ընդունելով վերոգրյալը՝ խնդրում ենք վերանայել Երևանի հանրային տրանսպորտի միասնական տոմսային համակարգի «180 դրամ» և «10 ուղևորություն» ուղետոմսերի փաթեթները և դրանց գործողության պայմաններից հանել գնված ուղևորությունները որոշակի ժամկետում սպառելու պայմանը։

Իրավաբան՝

Նաիրա Ավետիսյան